ՓՈԽԱՐԻՆԵԼՈՎ ԲՆԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Նպատակ

Այս ծրագրի նպատակն է բնապատկերի լուսանկարչության գեղեցկության և բուժիչ արդյունքի շնորհիվ օգնել բնակչության խոցելի խմբերին՝ ՀՕՖ Երևանի «Երեխաների աջակցության կենտրոն»-ի ռիսկային խմբին պատկանող երեխաների և անչափահասներին և հիվանդանոցներում գտնվող հիվանդներին, իրենց խնամակալներին և ընտանիքներին:

Այս երկու խմբերին կապող օղակը արվեստի բուժիչ ուժն է: «Փոխարինելով բնապատկերները» ծրագրի նպատակն է այս խմբերի կարիքները միմյանց համակցելով հասնել նրան, որ այն հանդիսանա բուժման և հույսի աղբյուր իրենց համար:

Գործողություններ

- ՀՕՖ Երևանի «Երեխաների աջակցության կենտրոն»-ի երեխաների հետ անցկացնել լուսանկարչության թրեյնինգ, որը իր տեսակի մեջ կծառայի որպես թերապիա, ինչը հնարավորինս կբարելավի երեծաների մտավոր առողջությունը:
- Հայաստանի բուժհիմնարկներին տրամադրել բնապատկերների լուսանկարները, որը լրացուցիչ հարմարավետության, հույսի և հանգստության աղբյուր կհանդիսանա հիվանդների, իրենց ընտանիքների և հիվանդանոցի աշխատակիցների համար:

Ծրագրի նկարագրությունը

Արվեստի բուժիչ ուժը ՀՕՖ Երևանի «Երեխաների աջակցության կենտրոն»-ի երեխաների համար

ՀՕՖ Երևանի «Երեխաների աջակցության կենտրոն»-ը խոցելի խմբին պատկանող երեխաների համար է: Կենտրոնը երեխաներին տրամադրում է ապաստարան, կատարում է ծառայությունները, որոնցից են խորհրդատվությունը և հմտությունների զարգացումը: «Փոխարինելով բնապատկերները» ծրագիրը առաջարկում է ռիսկային խմբի այս երեխաներին մի հնարավորություն, որի ընթացքում երեխաները ժամանակ կանցկացնեն դրսում՝ բնության գրկում: Երեխաները կսովորեն օգտվել լուսանկարչական ապարատից: Երեխաները ոչ միայն կշահեն նրանից, որ ժամանակ կանցկացնեն դրսում՝ բնության գրկում, այլև հնարավորություն կունենան իրենք իրենց արտահայտելու իրենց լուսանկարների միջոցով: Նրանց լավագույն լուսանկարները կտպագրվեն, կտեղադրվեն շրջանակի մեջ և կցուցադրվեն հիվանդանոցներում: Տեսնելով իրենց արվեստի կտորը հասարակական վայրում կօգնի և կխթանի իրենց ինքնավստահության հաստատմանը, ինչպես նաև կմիացնի այս երիտասարդներին իրենց համայնքի հետ: Երեխաները ձեռքբերում կհամարեն տեսնելով իրենց լուսանկարները փակցված հիվանդանոցներում: Տարեցտարի, ՀՕՖ Երևանի «Երեխաների աջակցության կենտրոն»-ը պատրաստ կլինի տրամադրել լուսանկարչական պարագաները երեխաներին, որպեսզի իրենք նույնպես կատարեն իրենց փորձը լուսանկարչության ոլորտում:

Բուժիչ բնապատկերների լուսանկարները հայկական բուժհիմնարկներում

Բնության լուսանկարումը արվեստի ճյուղ է, որպես թերապիա: Ակնհայտ է, որ բնապատկերների լուսանկարները մարմնի համար բուժիչ ազդեցություն ունեն: Հետազոտությունը ցույց է տվել, որ այն հիցանդները, որոնք գտնվում են բնության շրջակայքում ավելի քիչ ցավ են զգում և ավելի շուտ են կազդուրվում ու դուրս գրվում հիվանդանոցից: Հեշտ է գիտակցել թե ինչպես է բնապատկերը համակցում հոգու հետ և բուժում այն, որն էլ իր հերթին բուժում է մարմինը: Հետազետությունը նաև առաջ է քաշում այն, որ բնապատկերի լուսանկարները իջեվնում են ճնշումը խթանում հույսի և հանգստության զգացումը: Ավելին, լուսանկարները հիվանդներին օգնում են արտացոլել իրենց միջավայրը: Ավելին տեղեկանալու համար բնապատկերների լուսանկարչության մասին կարող եք այցելել հետևյալ հղումներով՝

(1) http://en.wikipedia.org/wiki/Art_therapy#Definitions
(2) http://healingphotoart.org/about-us/scientific-evidence/
(3) http://www.henrydomke.com/index.php?module=menu&pId=101&page_name=healthcareArt

Լրացուցիչ տեղեկություններ՝

http://henrydomke.com/blog/
https://www.healthdesign.org/
http://www.healthcaredesignmagazine.com/article/designing-access-naturehealthcare

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Լուսանկարչական ապարատ	4	$250	$1,000
Եռոտանի	2	$150	$300
Լուսանկարների տպում	1,000	$1	$1,000
Հետնադիրներ 1000 լուսանկարի համար	1,000	$0.3	$300
Օրգանական ապակիով շրջանակներ 1000 լուսանկարի համար	1,000	$5	$5,000

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$7,600**